

Բ Ա Ֆ Ֆ Ի

(ՄԱՀՈՒԱՆ ՔԱՌԱՍՆԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ)

Գրեց՝ Մ. ՎԱՐԱՆԿԵԱՆ

I

1888-ի աշնանային տխուր, չարաչուք օր մը, Հայոց Աշխարհի վշտակիր կոունկն անցաւ Շուշուալ մասը բարձունքներէն՝ գութելու համար անակնկալ ու սասանեցուցիչ աղէտը. «Բաֆֆին կը մեռնի՛... Բաֆֆին մեռա՛ւ»:

Սուգ հազանք դպրոցական պատանիներս, որոնք գրեթէ ամէնքը մտեր էինք «ուխտեայնե-րու» րանակը:

Ինչպէ՞ս հաւատալ, որ չկայ այլեւս «Խնթ»-ի, «Կայծեր»-ի հեղինակը... Բաֆֆին — որ թոնակալօրէն տիրեր էր մեր սիրտերուն եւ ուղեղներուն: Բաֆֆին — միահեծան հրամանատարը հայ դադափարական երիտասարդութեան խոհերու եւ տենչանքներու... Գրեթէ ամէնքս գրուած էինք բաֆֆիական, ամէնքս՝ ներկայ եւ դալոց սպասաւորներ ազատագրուող հայրենիքի:

Եւ այժմ ալ, քառասո՞ւն տարի յետոյ, անհուն վշտով, կը վերյիշեմ պատանեկութեան այն հեռաւոր ու երջանիկ օրերը, երբ դեռ այնքան վառ էին յոյսերն ու երազները, երբ մենք համակ դադափար էինք եւ համակ անձնուիրութիւն...:

Եւ վերստին առջեւ է — «Կայծեր»ը: Երկ-րորդ անգամը՝ այն օրերէն ի վեր: Եւ դարձեալ առանց յուզմունքի չեմ կարող անցնել ա-նոր խոնարհած էջերէն... Ահա այն գիրքը, որ բոցավառեց ողջ հայութիւնը: Ահա՛ այն կարմրավառ Աստուաշունչը, որ կարճ միջոցով թափանցեց ազգի բոլոր խաւերը, մտաւորա-կանի առանձնասենեակէն մինչեւ գեղջուկի խրճիթն ու մեծատան դահլիճը, առաջ բերաւ տարերային հեղեղ մը, աննախընթաց հայոց դարաւոր պատմութեան մէջ — հեղեղ մը առ-նական առաքինութիւններու, հայրենասիրու-թեան, արիութեան եւ դիւցազնական անձնա-զոհութեան: Շարժում մը, որ Կոռնոսի պէս լափեց, այո՛, իր հարազատ զաւակները, բայց

եւ ստեղծեց նոր, միաձոյլ հայութիւն մը, տո-գորուած նոր գիտակցութեամբ, թօթափած դարերու ժանգն ու մուրը, զինուած ժամանա-կի ազատաշունչ գաղափարներով եւ միշտ պատրաստ մարտնչելու իր մարդկային ու քա-ղաքացիական իրաւունքներու համար:

Չուր չէ՛ Վարպետը զարգարել «Կայծեր»-ի առաջին գլուխը մարգարէի այս խորհրդաւոր ու նշանակալից բառերով.

«Բայց այն Սերովբէներից մէկը քուս դէպի ինձ եւ ձեռքումը կրակի կայծեր կային, որ սեղանի վրայից ունեւիճով վեր էր առած եւ իմ բերանին դիպցնելով, ասաց. ահա՛ այդ քո շըր-քունքներդ դիպաւ եւ քո անօրէնութիւններդ կը վերացնէ եւ քո մեղքերը կը սրբէ քեզանից»:

Եսայի 2. գլ., 6-7 համ.

«Հեղեղը» եկաւ — չ'անիծենք Բաֆֆին: Այն պիտի գար եւ արդէն իսկ ծայր տուած էր դեռ 70-ական թուականներուն, Խրիմեանի պատրիարքութեան օրով: Չլինէր Յակոբ Մե-լիք-Յակոբեանը — ուրիշ Բաֆֆի մը պիտի հանդէս գար ճակատագրօրէն... Միմիայն վա-տերը, հակայեղափոխական սոփեստներն եւ անբուժելի յիմարները կարող են սնդեւել, թէ հնարաւոր էր կանգնեցնել հայոց պատմու-թեան դահաւիժուող անիւր...:

* * *

«Կայծեր»ը վերստին առջեւ է: Ոգեւորու-թիւնն ու վհատութիւնը, վիշտն ու ազգային արժանապատուութեան եւ հպարտութեան զղացումը փոխն ի փոխ կը պաշարեն զիս: Այդ Կարօներն ու Ասլանները, որսորդ Աւօներն ու վարպետ Փանոսները, Մելիք Մանսուրներն ու Դալի Քէշիշները այլեւս վիպական անձնաւոր-ութիւններ չեն, որոնք ասկէ քառասուն տարի առաջ, մեր պատանեկան աչքերու առջեւ կը սասէին որպէս խաբուսիկ ուրուականներ, — անոնք իրական դէմքեր են, որոնց թիւը լէզէոն եղաւ հայոց մէջ, եւ եթէ Բաֆֆին վեր բարձ-րանար գերեզմանէն 1897, 1903, 904, 905,